ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. Երևան «09» 02 2019թ

«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամը (այսուհետ՝ համալսարան) ի դեմս՝ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա մի կողմից և Շիրակի մարզի Գյումրու «Ֆոտոն վարժարան» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ վարժարան) ի դեմս՝ տնօրեն Մանվել Մովսիսյանի, որը գործում է վարժարանի կանոնադրության հիման վրա մյուս կողմից, (այսուհետ՝ կողմեր) ելնելով կրթական ծրագրերի ժամանակակից պահանջներից, ավագ դպրոցի սովորողների հակումներին, կարողություններին, նրանց նախասիրություններին համապատասխան և ապագա մասնագիտության ընտրության, մասնավորապես համալսարանում գործող մասնագիտությունների վերաբերյալ սովորողների մոտ պատկերացումներ և կողմնորոշում ձևավորելու, այդ մասնագիտություններով բարձրագույն ուսումնական հաստատություն ընդունվելու համար համապատասխան կրթական ծրագրերի իրականացմամբ տարբերակված, այդ թվում լրացուցիչ խորացված հոսքային ուսուցում կազմակերպելու միջոցով ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, հումանիտար ուղղություններով խորացված ուսուցմամբ ավագ դպրոցի շրջանավարտներ պատրաստելու նպատակով կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1 Պայմանագրի առարկան

Կողմերը պատրաստվում են համատեղ մասնակցությամբ պատրաստել ֆիզիկամաթեմատիկական, բնագիտական, հումանիտար ուղղություններով խորացված ուսուցում ստացած շրջանավարտներ համալսարանում գործող մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն ստանալու ակնկալիքով:

2 Վարժարանը պարտավորվում է.

1) Վարժարանի նպատակային դասարաններում (հոսքերում) ուսումնառությունը կազմակերպել՝ օգտագործելով կողմերի փոխհամաձայնեցված լրացուցիչ ծրագրերը:

2) Վարժարանում կազմակերպել համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և սովորողների հանդիպումներ, ուսումնակրթական աշխատանքներ, զրույցներ, բանավեճեր և քննարկումներ, գրավոր աշխատանքներ, թեմատիկ մրցույթներ և այլ միջոցառումներ, որոնք կնպաստեն սովորողների մասնագիտական կողմնորոշմանը:

3) Կազմակերպել հանդիպումներ Վարժարանի աշակերտների ծնողների հետ՝ պայմանագրի շրջանակներում համագործակցության խնդիրների մասին նրանց տեղեկացնելու նպատակով:

4) Վարժարանում կազմակերպել համալսարանի ուսանողների մասնագիտական պրակտիկան՝ պրակտիկայի կազմակերպման ժամկետների, ուսանողների քանակի մասին նախապես իրազեկելով վարժարանին և համաձայնեցնելով համապատասխան ծրագիրը:

3 Համալսարանը պարտավորվում է.

1) Համալսարանի կողմից սահմանված կարգերով և պայմաններով մեթոդական աջակցություն ցուցաբերել վարժարանի ուսուցիչներին, նրանց համար համալսարանի Գիտական կենտրոնի աջակցությամբ կազմակերպել կարճաժամկետ վերապատրաստման դասընթացներ:

2) Յուրաքանչյուր տարի վարժարանի աշակերտների համար կազմակերպել «Բաց դռների օր» և ճանաչողական այցեր Համալսարան՝ նրանց հնարավորություն ընձեռելով հանդիպելու համալսարանի և Ֆակուլտետների ղեկավարության ու պրոֆեսորադասախասական կազմի հետ՝ ծանոթանալու կրթական համակարգին և ուսումնառության առկա հնարավորություններին:

3) Վարժարանի ավարտական դասարանների աշակերտների համար պարբերաբար իրականացնել տեղեկատվական աշխատանք՝ նախապատրաստելով բուհ ընդունվելուն:

4) Վարժարանի հետ համատեղ՝ ավարտական դասարանների լավագույն աշակերտների համար հանրակրթական տարբեր առարկաների գծով Համալսարանում կազմակերպել օլիմպիադաներ:

5) Վարժարանի ուսուցիչների որակավորման բարձրացմանը նպաստելու նպատակով նրանց մասնակից դարձնել համալսարանում կազմակերպվող գիտաժողովներին և սեմինարներին:

4 Պայմանագրի գործողության ժամկետը, փոփոխումը, լրացումը և լուծումը

1) Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 5 (հինգ) տարի ժամկետով:

2) Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատավել միայն կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժան մասը:

3) Սույն պայմանագիրը Կողմերի համար ֆինանսական որևէ պարտավորություն չի առաջացնում, իսկ ֆինանսական ծախսերի առաջացման դեպքում այն համաձայնեցվում է լրացուցիչ համաձայնագրով:

4) Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5) Սույն պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Համալսարան»	«Վարժարան»
Խաչատուր Աբովյանի անվան հայկական	«Ֆոտոն վարժարան»
պետական մանկավարժական համալսարան	Շիրակի մարզ, ք. Գյումրի,
ք. Երևան, Տիգրան Մեծի 17 12/1	Անի թաղամաս, Ե. Չարենցի
ՀՎՀՀ02527624	հ/հ ԱՌԷԿՍԻՄԲԱՆԿ-ի
Հ/Հ<<Արարատ բանկ>>	Գյումրու մասնաճյուղ 2380018102700100
1510002308480100	Հարկային կոդ՝ 05511561
	հեռ. (0312) 6-78-93

Ռուբեն Միրզախանյան

Մ. Մովսիսյան